

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6865

ՀԱՅՈՒԹ

ՀԵՅՏԱՐԱԿԻՆ ԱԽՏԲԱԿԻՆ

ՀՎԶ ԽԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 10


---

---

= ԼԵՆԻՆՑԱՆ =

ԿՈՄՅԵՐԵՍՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Ե.



---

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1927

## ԱՌՄՅԱՋԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ԱՇԻԱՋՅԱՆ, Զ. Ռուկ եղեկավարում, 38 եջ,  
1925 թ., Լենինական . . . . . Գինը — ը. 15 կ.
2. ԳՐԵՋԵՐ, Գ. Գյուղ-կոմիսարիականներին .  
կոտիտալիստական յերկիրների յերիտասար-  
դության կյանքի և պայքարի մասին, թարգմ.  
Գար. Հակոբյան, 80 եջ, 1926 թ., Վաղար-  
շապատ . . . . . » — ը. 25 կ.
3. ԳՐԻՄԵԴԻՆ. Խոչպես եղառուցված Ծ. Լ. Կ.  
Յե. Մ., 70 եջ, 1925 թ., Վաղարշապատ. » — ը. 25 կ.
4. ԳՐԻԳ. ՅԵՐԱՊԵՏԻՆ սիստեմի մասին, 56 եջ,  
1925 թ., Վաղարշապատ . . . . . » — ը. 30 կ.
5. ՅԵՐԵՒՆԻ, Ա. Կոմսոմոլն ու կոռպերացիան,  
90 եջ, 1925 թ., Վաղարշապատ. . . . . » — ը. 25 կ.
6. ԶԻՆՈՎՅԵՎ, Գ. Խոչպեսք երմանա և հիշի  
Համ. Կ. Կ.(Բ)մեջ մտնող ամեն մի բանվոր,  
62 եջ, 1925 թ., Վաղարշապատ.. . . . . » — ը. 35 կ.
7. ԼԵՎԴՈՒԻՐ. Կոմյերիտի պարտականություն-  
ները, 64 եջ, 1925 թ., Յերևան . . . . . » — ը. 15 կ.
8. ԼԵՎԴՈՒԻՐ. Յերեք սերունդ, 46 եջ, Յերևան — ը. 15 կ.
9. ԼԵՍԵՎԵՑԿԻ. Խոչպես են այժմ պատերազ-  
մում, 64 եջ, 1926 թ., Վաղարշապատ » — ը. 25 կ.
10. ԼԵՆԻՆ, Վ. Ի. Նամակներ հեռվից, 22 եջ,  
1925 թ., Յերևան . . . . . . . . . » — ը. 7 կ.
11. » Խոչպես պետք ելինի կոմյերիտա-  
կունը, 47 եջ, 1926 թ., Լենինական » — ը. 15 կ.

ԼԿԵՐՄ ԱՌԱՋՔԻ ԱԽՏԻՃՈՒՆ

№ 10 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 10

ԼԵՆԻՆՅԱՆ  
ԿՈՄՅԵԲԵՍՄԻԹՅՅՈՒՆԻՒՅՆ

A I  
82913

Թարգմ. Ե.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գրառեալվար № 54ր. հ. 499 Տիրաժ 4000.

---

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—177.



## ԼԵՆԻՆՑԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ի ԿՈՄՍՈՄՈԼԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Միուրյան անելիքն  
ե—կոմմունիստական  
գաստիարակուրյուն  
առ յերիտասարդ  
բանվորներին ու գյու-  
ղացիներին

Կոմմունիստական հա-  
սարակակարգի կառուցու-  
մը պահանջում է չափա-  
զանց տևական և բանվո-  
րական մի քանի սերունդ-  
ների լարված աշխատանք:

Հետզհետե տեղի յե ունենում սերունդների  
ընական փոխարինումն: Բայլշեկույան հին գվար-  
դիայի շարքերը նոսրանում են: Նրա պայքարի  
փորձի վրա, միությունը պիտք ե պատրաստի  
կառուցողների նոր ջոկատներ: Միությունը  
պետք ե հիշի Լենինի խոսքերը.—«Դուք պետք  
ե լինեք առաջին կառուցողները կոմմունիստա-  
կան հասարակության միլիոնավոր կառուցողնե-  
րի մեջ, վորպիսին պետք ե լինի յուրաքանչյուր  
յերիտասարդ մարդ, յուրաքանչյուր յերիտա-  
սարդ աղջիկ»: Բանվորագյուղացիական յերիտա-

սարդության կոմմունիստական դաստիարակությունից ե կախված, մեծ չափով, հեղափոխության հետագա զարգացումը:

Յերիտասարդ բանվորն ու գյուղացին ինչպես պետք ե ուսանի կոմմունիզմը։ Միության Յ-րդ համագումարում արտասանած «Յերիտասարդության անելիքների մասին» ճառի մեջ լենինն այդ առթիվ պատասխանում ե.

«Ահա ինչումն ե կայանում այն հարցի պատասխանը, թե յերիտասարդ աճող սերունդն ինչպես պետք ե ուսանի կոմմունիզմը։

Նա կարող ե ուսանել կոմմունիզմը, միայն կապելով իր ուսուցման, դաստիարակության և կրթության լուրաբանչուր քայլը հին շահագործական հասարակության դեմ մղած՝ պրոլետարների ու աշխատավորության անընդհատ պայքարի հետ։

Յերիտասարդական կոմմունիստական միությունը միայն այն ժամանակ կարդարացնի իր կոչումը, վոր նա յերիտասարդ սերնդի կոմմունիստական միություն ե, յեթե նա իր ուսուցման, դաստիարակության, կրթության լուրաբանչուր քայլը կկապի շահագործողների դեմ տարվող վողջ աշխատավորության ընդհանուր պայքարին։

Կոմմունիզմի համար մղած իր պայքարում

պրոլետարիատը ղեկավարվում է Մարքսի և Լենինի հեղափոխական ուսմունքով։ Նրանց ուսմունքը հիմնված է պրոլետարիատի պայքարի փորձի վրա, նա հանդիսանում է «մի հզորագույն զենք աշխատավորության ձեռքին, ոգնում է պարզ տեսնել պայքարի նպատակը և ղեղի հաղթանակը տանող ճանապարհ» (Միության կանոնադրությունից)։ Յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է համառ կերպով ուսումնասիրել Մարքսի և Լենինի տեսությունը, կոմունիստական կուսակցության և կոմմունիստական ինտերնացիոնալի ծրագիրն ու սլատմությունը։ Այդ տեսությունը մենք ուսումնասիրում ենք նրա համար, վորպեսզի ավելի ակտիվ և գիտակցաբար մասնակցենք հեղափոխական շինարարությանը։ Մարքսի և Լենինի հեղափոխական ուսմունքը մեզ հնարավորություն ե տալիս ճիշտ հասկանալու համար կուսակցության և հեղափոխության առաջ դրված խնդիրները, միաժամանակ, միայն հեղափոխական պայքարում մասնակցելն ե, վոր ոգնում ե մեզնից յուրաքանչյուրին իր անձնական փորձով ավելի խորը և ավելի լավ յուրացնելու արդ ուսմունքը։

Միությունն իր անդամներին դաստիարակում ե, շաղկապելով հեղափոխական թեորիան

հեղափոխական պրակտիկայի հետ Միությունն իր գոյության առաջին իսկ որերից մասնակցում ե հեղափոխական պալքարին, սիությունը միշտ հրապարակ ե լեկել, վորպես կուսակցության հավատարիմ ոգնական:

Մեր թշնամիները մեզնից վատ չեն հասկանում յերիտասարդության հարցի նշանակությունը, կոմյերիտմիության աշխատանքի կարևորությունը, Քաղաքի և գյուղի աճող նոր բուրժուազիան փորձում ե յերիտասարդությանը յենթարկելու իր ազդեցությանը. «Ճավալվող դասակարգային հակասությունները և գյուղի ու քաղաքի նոր բուրժուազիայի աճումը, նշանակում ե, այսպիսով, և յերիտասարդության համար մղած պալքարի ծավալումը» (կուսակցության 14-րդ համագումարի բանաձեկից):

Վորքան ավելի յե աճում մեր յերկիրը, այնքան ավելի բարձրանում ե բնակչության բոլոր խավերի ակտիվությունը, այնքան ավելի բարձրանում ե յերիտասարդ բանվորների ու գյուղացիների կոմմունիստական դաստիարակությունը, այնքան ավելի ջանքեր են պահանջվում այդ խնդրի հաջող լուծման համար:

Կոմյերիտմիությունը  
պայմանում ե կու-  
սակցության հետ  
միասին

Բանվոր յերիտասարդությունը բանվոր դասակարգի մի մասն ե, պրոլետարական հեղափոխության

ջոկատներից մեկը։ Կոմյերիտմիության անելիքները միշտ բղխել են հեղափոխության անելիքներից։

Որինակի համար վերսինք ըազաքացիական պատերազմի ամենածանր որերը—1919 թ. աշունը։ Այն ժամանակ ինչպես ե պայքարել կոմյերիտմիությունը։

1919 թվի հոկտեմբերին, յերբ զումարվել ե կոմյերիտմիության համագումարը, խորհրդային հանրապետությունը թշնամիների ողակման մեջ եր։ Հարավից հարձակվում եր Դենիկինը՝ մոտենում եր Տուլային, արևելքից—Կոլչակը. Յուղենիչը Պետրոգրադին մոտենալու ճամբան եր հարթուժ։ Կուսակցությունը ղեկավարում եր պայքարը, իր լավագույն ուժերին նառագարկում եր զորաճակատը։ Կոմյերիտմիությունն այդ ժամանակ ուներ 96 հազար անդամ, մի բուռն յերիտասարդություն, համեմատած միության ներկա կազմի հետ։ Սակայն այդ մի բուռն կոմյերիտականները կովկել են քաղաքացիական պատերազմի կրակի մեջ։

Համագումարը վորոշել ե մի շաբաթվա ընթացքում կոմյերիտականներին մոքիլիզացիայի յենթարկել զորաճակատ ուղարկելու համար։

«Հաշվի առնելով խորհրդային հանրապետության ներկա կացությունը, ՈԼԿՅՅՄ համա-

ոռւսաստանյան 2. ըդ համագումարը վորոշում ե.

1) Հանրապետության պաշտպանության և կարմիր Բանակի ճակատն ու թիկունքը սպասարկելու համար կատարել միության անդամների մոքիլիզացիա սկսած 16 տարեկանից:

2) Մոքիլիզացիան կատարել հետեւյալ չափերով.

ա) Հարավային ճակատի ամրացված սեկտորում գտնվող՝ Արլովի, Տուլայի, Վարոնեժի, Տամբովի, Ռյազանի, Կալուժի և Մոսկվայի նահանգներում գտնվող կազմակերպությունները մոքիլիզացիան կիրառում են զիխովին:

բ) Մնացած կազմակերպությունները մոքիլիզացիայի յեն յենթարկում իրենց անդամների 30 տոկոսը, սկսած 16 տարեկանից»:

«Կտանք ամենը, — կոչ ե անում համագումարը, — միության գիտակից ու լավագույն մասը, հեղափոխությունը պաշտպանելու համար, կարմիր Բանակի ճակատն ու թիկունքը սպասարկելու համար։ Մենք ցույց կտանք, վորբարձր ե Խուսաստանի բանվորականացիական դիտակից յերիտասարդության վոգին, վոր նապատրաստ ե պայքարի»։

Այն կոմյերիտականները, վորոնք մնացել եյին թիկունքում, թշնամու մոտ, կուսակցության հետ միասին դադանի աշխատել են, ա-

պըստամբություններ են կազմակերպել, սպիտակ-  
ների թիկունքը և զորքը բարոյալքելու համար  
ազիտացիոն աշխատանք են կատարել: Քիչ կոմ-  
յերիտականներ չեն այդ պահուն զոհվել հերո-  
սական մահով հատկապես Ուկրայնայում—  
Դենիկինի որոք—և Սիրիում—Կոլչակի տիրա-  
պետության ժամանակ:

Ուսանելով կուսակցության որինակի վրա,  
կոմյերիտմիությունը քաջարի կովել ե կարմիր  
բանակի շարքերում: Թե ինչպես ե պայքարել  
կոմյերիտմիությունն, այդ մասին մեզ ասում ե  
Անատոլի, Պապովի որինակը.

«Կովում ելինք Դենիկինի դեմ: Անատոլին  
նշանակված եր բրիգադայի կոմիսար: Բայց նը-  
րան հանձնարարում ելին մարտական խնդիր-  
ներ: Այդպես որինակ, Դոնեցի ավազանում,  
նրան տրամադրել են յերկու զրահպատ գնացք՝  
կայարանը գրավելու հանձնարարությամբ:

Նա առաջ շարժվեց: Թշնամու հրետանու  
բաժնյակի (բատարեա) և իր (Պապովի) զինա-  
պատ գնացքի կրակը զարհուրելի յեր: Մարտե-  
րում կոփիված Պետերբուրգի բանվորները, Պու-  
տիլովցիները, վոր իրենք ելին կահավորել զրա-  
հպատ գնացքը, կնճոռա, կենտրոնացած, մրից,  
լուղից ու ծխից սկացած գեմքերով նայում ելին  
իրենց յերիտասարդ հրամանատարների աչքե-

ըլն, — նրանց հարկավոր եր, վորպեսզի մեկը,  
վորպեսզի հանգիստ և համողված կերպով հրա-  
մաններ արձակեր: Թշնամու կրակն անասելի  
մեծացավ: Նշանակում ե թշնամին անցել եր  
թիկունքը, ստիպված պետք եր նահանջել: Ան-  
խնա հարվածի յենթակա զրահապատ գնացքները  
սկսեցին դանդաղ հեռանալ: Յերիտասարդ՝ ու-  
ժերը չկարողացան կրել լարվածությունը, Անա-  
տոլիյ Պապովը բարձրացավ գնացքի տանիքը և  
մեռածի նման պառկեց:

Շուրջը կատաղի ժայթքում ելին թնդանո-  
թի ոռւմբերը, գիշերը ցերեկ դարձնելով: Զրա-  
հապատ գնացքը դողում եր կործանիչ համազար-  
կերից: Բայց ման իր ձեռքը տարավ յերիտա-  
սարդի գլխի վրայով: Մի յերկու ըոպե անշար-  
ժություն, թարմ քամի, աստղալից յերկինք:  
Նրա ուժերը վերականգնվեց:

Նա իջավ, հրամայեց շտապ հեռանալ: Հա-  
վաքեցին հրետանու ոռւմբերի պաշարը, դիտե-  
ցին, շտկեցին, նորից ման կրակի փոթորկի  
մեջ: Կայարանը վերցված եր»:

1919 թվի հոկտեմբերի 30-ին Անատոլիյ  
Պապովը մեռավ:

Կոմյերֆսմիուրյունը  
կուսակցության հետ  
միասին սոցիալիզմ  
և կառուցում

Քաղաքացիական պա-  
պատերազմը վերջանալուց  
հետո կուսակցությունը  
«ուղմական կոմմունիզմից»

անցնում ե Նեպին։ Սկսվում ե տնտեսական շինարարության լարված աշխատանքը։ Շնորհիվ կուսակցության ճիշտ քաղաքականության ակնհայտ ե տնտեսական հոկայական վերելքը, տընտեսության սոցիալիստական տարրերն աճում են ավելի արագ, քան կապիտալիստականը։ Բանվոր դասակարգը թևակոխել ե սոցիալիզմի պրակտիկ շինարարության շրջանը։

Կոմիերիտմիությունը միշտ գնացել է կուսակցության հետ միասին։

Աշխատելով նրա ղեկավարությամբ, կոմիերիտմիությունը չտեսնված չափերով աճել է։ Առաջին համագումարին 22 հազար անդամ ունեցող կոմիերիտմիությունը ներկայումս իր շարքերում հաշվում է յերկու միլիոնի չափ անդամ։ Կոմիերիտմիության աճման ընթացքը ցույց է տալիս հետեւյալ դիագրամը։

Խնչպես ե անել կոմիերիտմիությունը

#### Միությունն ուներ

1-ին	համագում.	1918 թ.	հոկտ.	22,000	անդ.
2-րդ	»	1919 թ.	»	96,000	»
3-րդ	»	1920 թ.	»	483,000	»
4-րդ	»	1921 թ.	»	415,000	»
5-րդ	»	1922 թ.	»	247,000	»
6-րդ	»	1924 թ.	հուլիս	683,000	»
7-րդ	»	1926 թ.	մարտ	1,700,000	»

Իր զիխավոր աշխատանքը, միությունը ներկայումս համարում ե այն, վորպեսզի կուսակցության հետ միասին ձեռք ձեռքի տված գործունյա մասնակցի սոցիալիզմի շինարարության:

«Սոցիալիզմի պրակտիկ շինարարության շրջանը, վորթեվակոխել ե Խ. Ս. Հ. Մ.՝ ասվում ե Շ. ՐԴ համագումարում ընդունված բանաձևի մեջ—ղնում ե Ռէկիթել առաջ, վորպես հիմնական ինուիր քանվոր յեվ զյուղացի յերիտասարդության սասաների դաստիարակությունը սոցիալիստական շինարարության սեղ նրա պրակտիկ մասնակցության հիմունքով»:

## II ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Քննենք այժմ, թե ինչպես ե կոմյերիտմիությունը մասնակցում սոցիալիստական շինարարությանը։ Սկսենք արդյունաբերության մեջ կոմյերիտմիության ունեցած անելիքներից։

Պետությունը հոգ ե տանում բանվոր յերթասարգության մասին

Չորրորդ զրույցում մենք սահմանեցինք, թե ինչքան խոշոր տարբերություն կախորհրդային սոցիալիստական ֆաբրիկայի և նախահեղափոխական շրջանի կապիտալիստական ֆաբրիկայի միջև։ Նույնքան

մեծ ե տարբերությունը և բանվոր յերիտասարդության առաջվա և ներկայիս վիճակի միջև։

Կապիտալիստի համար յերիտասարդի աշխատանքն եժան աշխատանք ե, վորի համար քիչ ե վճարում և վորին կարելի յե շատ շահագործել։ Նրա աշխատանքի վրա կապիտալիստը նայում ե այսորվա տեսակետից, անչափահասին, քանի նա աշխատում ե, ավելի շատ շահագործելու տեսակետից։ Միտին բացառիկ դեպքերում, յերբ չեր բավականացնում վորակավոր բանվորական ուժը, կապիտալիստները քիչ թե շատ կազմակերպված կերպով յերիտասարդությունից պատրաստում ելին անհրաժեշտ վորակավորված բանվորներ։ Նման դեպքերում տրվում ելին չափաղանց նեղ գիտելիքներ, վորովհետերութուազիան փոքր ինչ յերկյուղ եր կրում բանվոր յերիտասարդության գրագիտությունից ու գիտակցությունից։

Միանգամայն ուրիշ կացություն ենք նկատում մենք խորհրդային ձեռնարկության մեջ։

Ամենափոքր գործարանում ու ֆաբրիկայում այժմ աշխատում են կազմակերպել յերիտասարդությունից վորակավոր բանվորներ պատրատելու գործը։ Սահմանված ե անչափահասի աշխատանքի պաշտպանության կանոնների և որենքների մի ամբողջ շարք. — անչափահասների

բրոնիան արդյունաբերության մեջ, նվազ բանվորական որ (4 ժամաց՝ մինչ 16 տարեկան անշափահասների համար, և 6-ժամյա—16-ից մինչև 18 տարեկանների համար) ութ ժամյա բանվորական որավարձատրությամբ, անշափահասների աշխատանքի արգելումն գետնի տակ է վսասակար աշխատանքների մեջ:

Նման միջոցների կիրառումը կառավարությունից պահանջում է նյութական մեծ զոհողություններ, վորովհետև արդյունաբերության մեջ յերիտասարդության աշխատանքն ավելի թանգ ե նոտում, քան հասակավոր բանվորների աշխատանքը։ Կառավարությունն այդ զոհողությունների առաջ կանգ չի առնում, վորովհետեւ նա իր առաջ խնդիր ե դնում կոմմունիստորեն դատիարակել ըանվոր յերիտասարդությունը, պատրաստել նրանցից սոցիալիզմի կայուն ու ըանիւմաց կառուցողներ։

**Կոմյերիտական, ավելի մոտ արգյունաբերությանը**

**Կապիտալիստի դիմաց բանվոր յերիտասարդությունը տեսել ե իր յերդվյալ թշնամուն։ Հին ֆաբրիկան նրա աչքում կապիտալիստի համար շահագործման մի զենք ե յեղել։ Նախահեղափոխական ֆաբրիկան բանվոր յերիտասարդության մեջ դաստիարակել ե ատելություն դեպի գործարանները, զարգացրել**

Ե շահագործման դիմադրելու մարտական վո-  
ղին:

Իսկ խորհրդային ֆաբրիկան յերիտասարդ  
բանվորի համար հանդիսանում ե իր, իրեն հա-  
րազատ, իրեն սոտիկ ֆաբրիկան։ Յերիտասարդ  
բանվորը գիտե, վոր մեքենաների անիմսերն  
այլևս կապիտալիստի հարստացման համար չեն  
պտտվում, յերիտասարդ բանվորն այժմ գիտե,  
վոր հաստոցների (станок) վրա նա կռում է  
իր սեփական դասակարգի ուժն ու հաղթանակը։  
Կոմյերիտմիությունը պետք ե գործադրի իր բո-  
լոր ջանքերը, վորպեսզի ոգնի կռւսակցությանն  
ու խորհրդային իշխանությանը բարելավելու  
արտադրությունը, ծավալելու պետական ար-  
գյունաբերությունը — սոցիալիստական շինարա-  
րության հենարանը։ Յերիտասարդ բանվորից  
պահանջվում ե, վորպեսզի նա խնամքով վերա-  
բերվի արդյունաբերությանը, մտահոգվի նրա  
բարելավման խնդրով։

Արդյոք, յերիտասարդ բանվորը միշտ նման  
վերաբերմունք ե հայտնաբերում դեպի արդյու-  
նաբերությունը, Վ.Հ.։ Դրան լավագույն ապա-  
ցույց կարող ե ծառայել կոմյերիտմիության  
անդամների մեջ գործակքությամբ (прогул)  
դբաղվողների գորությունը։

Կոմյերիտականը յեզ կոմյերիտամիության գոր-  
առագրական աշխա- ծարանային բջիջը պետք է  
տանքը ձգտի, վորպեսզի յուրաքան-  
չուր կոմյերիտական արդյունաքերության մեջ  
որինակելի լինի, վորպեսզի կոմյերիտականն աշ-  
խատանքի արտադրողականության բարձրացման  
գործում առաջիններից առաջինը լինի։ Բջիջը  
պետք է իմանա, թե իր անդամներից յուրա-  
քանչյուրն ինչպես ե վերաբերվում արդյունա-  
քերությանը։ Ամեն տեսակի ագիտացիայից ա-  
մենից լավ ներգործում ե կոմյերիտականի  
անձնական որինակը։ Անկուսակցական յերիտա-  
սարդությունը չի հավատա կոմյերիտականին,  
վորը խոսքով կոչ ե անում մասնակցել սոցիա-  
լիստական շինարարության, իսկ ինքն անփույթ  
վերաբերմունք ե ցույց տալիս դեպի արդյու-  
նաքերությունը։ Բջիջը պետք է ձգտի, վորպես-  
զի, ըստ հնարավորության, մեծ չափով կոմյերի-  
տականներ մասնակցեն արտադրական խորհր-  
դակցություններին։ Իր ժողովներում, բջիջը հա-  
ճախակի պետք ե քննության յենթարկի արտա-  
դրության հետ կապված խնդիրները, այն նկա-  
տառումներով, վորպեսզի յուրաքանչյուր առան-  
ձին դեպքում սահմանի բանվոր յերիտասարդու-  
թյան անելիքներն արդյունաքերության բարե-  
լավման բնագավառում։

Այդ ժողովների միջոցով կոմիերիտականները մոտենում են արդյունաբերությանը, այդ ժողովներն ոգնում են, վորագեղի կոմիերիտականներից պատրաստվեն մեր տնտեսական շինարարության գործունյա մասնակիցներ։

Արգյունաբերության  
գարգացումն ու գո-  
րակավորումը

Հարցրեք պատահած յե-  
րիտասարդ բանվորին։—

ինչի՞ն ես ձգտում, ամենից շատ ինչի՞ կարիք ես զգում։ Յեվ հարյուր մարդուց 99-ը, այլ նույնիսկ ամեռողջ հարյուրը կալատասխանի՝ յես ցանկանում եմ բարձրացնել իմ վորակը և բա-  
րելավել իմ նյութական վիճակը։

Դժվար չի հասկանալ, վոր բանվոր յերիտասարդության՝ իր վորակը բարձրացնելու ձգտումը լիովին զուգաղիպում ե սոցիալիստական շինարարության ընդհանուր անելիքներին։ Բանվորական ուժի վորակի բարձրացումից ե, նշանակալից չափով, կախված արդյունաբերության հաջող գարգացումը։ Մեր արդյունաբերության արտադրանքի վոչ բավարար բարձր վորակը մեծ շափով կախված ե ձեռնարկությունների աշխատանքի համեմատաբար ցածր վորակից։ Արդյունաբերության հետագա լայնացումը պահանջում է վորակավոր բանվորների նորանոր կադրեր։

Միայն 1926-27 տնտեսական տարում պա-

հանջվում ե 80 հազար նոր բանվորներ, նրանցից, մոտավորապես, 50 հազարը – վորակ ունեցող: Յենթադրվում ե, վոր մոտագա հինգ տարիների ընթացքում պահանջվելու յե մոտ մեկ միլիոն նոր բանվորներ, վորի նշանակալից մասը պետք ե լինի վորակավոր:

Վորտեղից պետք ե վերցնի արդյունաբերությունն իրեն անհրաժեշտ վորակավոր բանվորական ուժը: Մինչև հիմա գլխավոր աղբյուրը կազմել են այն վորակավոր բանվորները, վորոնք առաջ յեղել են արդյունաբերության մեջ, սակայն հեռացել են ֆաբրիկաներից քաղաքացիական պատերազմի տարիներին: Ներկայումս համարյա բոլոր այդ բանվորներն արդյունաբերության մեջ են քաշված: Արդյունաբերության համար վորակավոր բանվորական ուժ մատակարարելու գործը ներկայումս պետք է տեղի ունենա գերազանցապես նոր բանվորական ուժ պատրաստելու հաշվին: Այդ բանվորական ուժը պետք ե պատրաստել, գլխավորապես բանվոր յերիտասարդությունից:

Յերիտասարդ բանվորների վորակավորում ստանալու ձգտումը լիովին զուգադիպվում է արդյունաբերական վողջ շինարարության շահերին և այդ ձգտումն անհրաժեշտ ե զարգացնելու խրախուսել:

Յանվար յերիտասար-  
գության վորակի  
քարծացման միջոց-  
ները

Զեռնարկության մեջ  
մենք ունենք բանվորական  
ուժ պատրաստելու յերեք  
ձև, վոր էայն գործադրու-  
թյուն եւ ստացել մեր յերկրում.— գործարանա-  
յին աշակերտության դպրոց (Փաբզավուչ), բրի-  
գադային և անհատական աշակերտության ձևն  
արդյունաբերության մեջ:

Գործարանային աշակերտության դպրոցը  
հանդիսանում եւ բանվորական ուժ պատրաստելու  
գլխավոր ձեվը՝ Յերեք տարվա ընթացքում գոր-  
ծարանային դպրոցն անշափահասին տալիս եւ  
վոչ միայն տեխնիքական այլ և քաղաքական  
ընդհանուր կրթական գիտելիքներ:

Նա իր առաջ խնդիր եւ դնում արդյունաբե-  
րությանը տալ գիտակից, գրագետ և տեխնիքա-  
պես վորակավորված աշխատող։ Զեռնարկու-  
թյան մեջ կոմյերիտական բջիջը պետք եւ գոր-  
ծադրի իր բոլոր ջանքերը, վորպեսզի, ըստ հնա-  
րավորին, բարելավի գործարանային դպրոցում  
տանելիք իր աշխատանքը, բղխեցնելով այն  
ՌԼԿՅԵՄ 7. ըդ համագումարի ցուցմունքներից։

Անհրաժեշտ եւ, վորպեսզի դպրոցն իսկապես  
պատրաստի տվյալ ձեռնարկության համար պի-  
տանի, վորակավոր բանվորներ, վորպեսզի դըպ-  
րոցը կառավարության վրա, հնարավորության

սահմաններում, եժան Նստի։ Դրա համար պահանջվում ե խոշորացնել գործարանային դրաբոցները։ Վորքան խոշոր ե գործարանային դրաբոցը, այնքան ավելի քիչ ե լուրաքանչյուր աշակերտի համար արվող ծախսերը։ Որինակ, Ստալինսկի գործարանային դպրոցում սովորողների թիվը հասնում է 468 հոգու և մի աշակերտի վրա ամսական ծախսվում է 28 ռուբլի, իսկ Յեկատերինոսլավսկի մետաղ-միության տրեստին կից դպրոցում, ուր սովորում են 160 հոգի, մի աշակերտի մի ամսվա ծախքը կազմում է 50 ռուբլի։

Դպրոցի եժանացումը կախված ե նույնական դպրոցի արտադրական ուսուցման կազմակերպումից։ Բջիջը պետք ե հետեւ, վորպեսզի գործարանային դպրոցի աշակերտներն ուսուցման ժամանակ արտադրեն ձեռնարկության համար անհրաժեշտ ե ոգտակար առարկաներ։ Դպրոցի եժանացման որինակ ե հանդիսանում «սկարախող» ֆաբրիկային կից դպրոցը, վորն ընդգրուելում ե 340 աշակերտ (ձեռնարկության անշափահանների կազմի մոտ 90 տոկոսը)։ Դպրոցն իր ծախսը հանում ե 60 տոկոսով։ Կաշվարդունաբերության տրեստի որական պատվերը — 350 զույգ կոշիկ — կատարվում ե լիովին։

Կոմյերիտմիության բջիջը պետք ե մտա-

հոգվի գործարանալին դպրոցի աշակերտության  
մեջ գիտակցական դիսցիպլինայի պահպանման  
մասին։ Անհրաժեշտ է, վորպեսզի լուրաքան-  
չյուր աշակերտ հասկանա, թե կառավարու-  
թյունն ինչքան շատ բան ե անում նրա համար,  
վոր նա պետք է կառավարության հավատն ար-  
դարացնի ամբողջապես։ Յուրաքանչյուր աշա-  
կերտ պետք է իմանա, վոր դպրոցից դուրս գա-  
լով նա ձեռնարկության մեջ արտադրական  
պատասխանառու տեղ պիտի գրավի։

Շատ մեծ նշանակություն ունի նույնպես  
ըրիգադալին ուսուցումն, այսինքն առանձին  
խմբերով՝ ըրիգադներով առանձին արհեստներ  
ուսանելը։ Բրիգադան ընդգրկում է 10—15 ա-  
շակերտներ, վորոնք սովորում են փորձված  
վարպետի՝ հրահանգչի ղեկավարությամբ։ Իհար-  
կե, ըրիգադալին աշակերտությունը չի կարող  
փոխարինել գործարանալին դպրոցին։ Սակայն  
պետք է հիշել, վոր գործարանալին դպրոց կա-  
րելի յե կազմակերպել վոչ բոլոր ձեռնարկու-  
թյուններում։ Բրիգադալին աշակերտությունը  
մեծ միջոցներ չի պահանջում և հանդիսանում ե  
բանվորական ուժի պատրաստման մասսայական  
ձևը։

Բրիգադալի ուսուցման համար ընդհանուր  
արհեստանոցում հատկացվում է առանձին տեղ,

բերության և վոչ մի ճյուղում չի լրացված  
այն տոկոսը, վոր սահմանված ե կուսակցու-  
թյան որենսդրությամբ։ ՌԼԿՅՅԵՄ Դ-ՐԴ համա-  
գումարին բրոնիան կազմում եր 4,3 տոկոս,  
այն ժամանակ, յերբ աշխատանքի որենքների  
համաձայն ամբողջ ԽՍՀՄ արդյունաբերության  
մեջ միջին տոկոսը հավասար ե 7 տոկոսի։

Վորոնք են բրոնիայի վոչ լրիվ կիրառման  
պատճառները։ Ամենից առաջ այն, վոր անչա-  
փահասի աշխատանքը թանգ ե նստում արդյու-  
նաբերության վրա, Արդյունաբերության մեջ  
յերիտասարդության դրությունը վարժական-  
արտադրական նպատակներ ե հետապնդում,  
Բացի դրանից, արտադրության մեջ անչափա-  
համների աշխատանքի վոչ ձեռնտու լինելը սահ-  
մանվում ե կրծատված 4 և 6. ժամյա բանվորա-  
կան որով, վորը վարձատրվում ե 8. ժամյա  
բանվորական որվա չափով։

Բանվոր յերիտասարդությունն ինչպես  
տեսնում ենք ստանում ե հասակավոր բանվորի  
աշխատավարձի համարյա կեսի չափով, իսկ յե-  
րիտասարդ բանվորի արտադրած ապրանքների  
նորման բավականին ցածր ե հասակավոր բան-  
վորի արտադրած ապրանքների նորմայի կե-  
սից։

Բայց դրանից, անտեսական աշխատանքի

փորձը ցույց ե տալիս, վոր արդյունաբերության առանձին ճյուղերում սահմանված բրոնիայի տոկոսները միշտ չեն համապատասխանում արդյունաբերության տնտեսական հնարավորություններին։

Գտնելով, վոր անհրաժեշտ ե պահպանել և կիրառել բրոնիայի մասին գոյություն ունեցող որենսդրությունը, կոմյերիտմիության 7. ըդ համագումարը միաժամանակ զրել ե, վոր ինքը կողմնակից ե «վերանայել բրոնիան արդյունաբերության առանձին ճյուղերում՝ ինչպես հնարավոր իջեցման այնպես ել բարձրացման անկյան տակ»։

Գործազրկությունը  
յերիտասարդության  
ռջանում

Իր ամբողջ սրությամբ  
միության առաջ ծառա-  
ցած ե գործազրկության

խնդիրը։ Աշխատանքի բորսայում մեզ մոտ ցուցակագրված են 144 հազար մարդ։ Իրականում անգործ յերիտասարդության քանակն անհամեմատ բարձր ե և հասնում ե 300 - 400 հազարի։ Իր ճնշող մեծամասնությամբ—այդ յերիտասարդությունն առաջին անգամն ե առաջարկում իր աշխատանքը։ Արդյունաբերության մեջ յեղած գործազուրկ բանվոր յերիտասարդություն չափազանց աննշան ե և կազմում ե ընդամենը 9 տոկոս։ Գործազուրկ յերիտասարդության կարերն

անում են գերազանցապես զյուղից, վորե աշխատանքի շուկան ենետում գլուղատնտեսության մեջ գործադրություն չգտնող նորանոր բանվորական ձեռքեր:

Զի կարելի ասել, վոր մոտակա տարիների ընթացքում մենք կարող կլինենք վերջ տալ գործադրկությանը։ Մեր արդյունաբերությունն այնքան արագ չի ծավալվում, վորպեսզի կարողանա կլանել իրենց աշխատանքն առաջարկող յերիտասարդական նորանոր խավերին։ Սակայն պետք ե ձեռնարկել մի շարք միջոցներ, վորոնք կարող կլինեն մեղմացնելու գործադրկությունը յերիտասարդության շրջանում։

Դրդ համագումարը նշել ե գործադրկության դեմ պայքարելու հետեւյալ գործնական միջոցները։

(ա) Պահպանել աշխատանքի բորսայի սեկցիաների աշխատանքի ուղարկման մենաշնորհը (բացառիկ իրավունքը)։

(բ) Ծավալել յերիտասարդությունը լայն չափով սնայնագործական արդյունաբերության մեջ քաշելու աշխատանքը, պարզաբանելով տնայնագործներին յերիտասարդության վարձելու արտօնությունները։

(գ) Լայնացնել արտադրական տների և աշխատանքի բորսայի կոմիտեներին կից աշխատան-

քային կոլեկտիվների, արհեստանոցների ցանցը,  
ձգտելով, վորպեսզի արտադրական տներում և  
արհեստանոցներում յեղած ժամանակամիջում  
յերիտասարդությունը մինիմալ ժամանական  
վորակում ստանա, արդյունաբերության մեջ  
մտնելու համար:

գ) Ուժեղացնել վորակավորման և պատ-  
րաստման աշխատանքը՝ աշխատանքի բորսային  
կից աշխատանքի կենտրոնական ինստիտուտի  
հատուկ դասընթացների ցանցի միջոցով, նրա  
մեջ տեղ տալով գլխավորապես յերիտասարդու-  
թյանը:

ե) Յերիտասարդությունը լայն չափով քա-  
շել գործազուրկների աշխատանքային կոլեկ-  
տիվների և արտելների մեջ:

զ) Ուժեղացնել գործազուրկ յերիտասար-  
դությանը հասարակական սեղոնային աշխա-  
տանքներին մասնակից անելու:

է) Պետական մարմինների առաջ հարց հա-  
րուցել, անգործության դեմ պարզաբերու հա-  
մար տրվելիք համապատասխան ֆոնդից անչա-  
փահասների անգործության դեմ պարզաբերու  
համար հատկացումներ անելու անհրաժեշտու-  
թյան մասին:

### III ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌԻԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Կոմյերիտմիռյունը  
պայմառում ե նոր  
գյուղի համար

Հինգերորդ և վեցերորդ  
զրույցներում մենք վեր-  
լուծեցինք մեր գյուղական  
տնտեսության հետամսացությունը։ Մենք պար-  
զեցինք այն ճանապարհը, վորով պետք ե գնա-  
գյուղը, վորպեսզի բարձրացնի իր բարեկեցու-  
թյունը, վորպեսզի ցրված, մանր ու բաժան-  
բաժան տնտեսությունից անցնի տնտեսության  
կոլեկտիվ ձեվերին։

Լենինը և կուսակցությունը շատ անդամ են  
նշել, վոր գյուղատնտեսության վերակերտման  
համար պահանջվում են չափազանց տեսական և  
համառ ջանքեր, հարկավոր են մի քանի տաս-  
նյակ տարիներ, վորպեսզի հաջողվի խոշոր ար-  
տադրության աջակցությամբ վերակերտել խոր-  
հըրդային գյուղը։

Կոմյերիտականը գյուղում — նոր  
գյուղի առաջավոր մարտիկն եւ իր այդ  
անելիքը կոմյերիտականը պետք ե  
իրագործի, ցուցադրելով գյուղացուն  
իր տնտեսությունն ավելի լավ վարե-  
լու անձնական որինակով։ Պետք ե վոչ  
թե սոսկ աղիտացիա մղել գյուղի կոոպերացման

**մասին,** այլ գործնական աշխատանքով ցույց  
տալ, թե այդ կոռպերացումն ինչպես ե հարկա-  
վոր կիրառել։ Գյուղի սոցիալիստական զարգաց-  
ման համար հարյուր անգամ ավելի շատ գործ  
կանի այն կոմյերիտականը, վորն ինքը կը հան-  
դիսանա կոռպերատիվի կազմակերպողը, քան  
միության այն անդամը, վորը շատ ժողովներ  
կանի, կոռպերացիայի մասին շատ զեկուցում-  
ներ կտա, սակայն գործնական վոչինչ չի անի  
գյուղի կոռպերացման համար։

**Վիխինո գյուղի**                    **Թե ինչպես պետք ե աշ-**  
**կոմյերիտականները**            **խատեն կոմյերիտականնե-**  
**րը գյուղում, այդ ցույց ե տալիս Ուխտոմսկի**  
**շրջանի Վիխինո գյուղի կոմյերիտականների որի-**  
**նակը։**

**Ընկերներից մեկը կոմյերիտական թերթում**  
**գրում ե.**

«ԿՅԵՄ ԲՋԻՋ վորոշում ե կոռպերատիվ  
բանալ։ ԲՋԻՋի բոլոր անդամներն անդամակրվում  
են կոռպերատիվին։ Դրանով սկիզբ ե դրվում  
կոռպերացիայի կազմակերպման։ Ընտրում են  
հարվածային լեռյակ։

Խոկ կոռպերատիվ սահմանական հեշտ գործ չեր։  
Կոռպերացիայի հեղինակությունն արդեն  
ընկած եր, այստեղ գոյություն ունեցող կեղծ-  
կոռպերատիվի շնորհիվ։

— Գիտենք մենք ձեզ, կոռապերատուրներ,  
տես ինչ մարդիկ են գուրս յեկել՝ զայրացած  
ասում ելին գյուղացիները, մի քանիսին խա-  
բել եք, մյուսներին այլևս չեք կարող խաբել:

Յեվ մի ժամանակ գյուղում «կոռապերատիվ»  
խոսքը համազոր եր «գող» խոսքին:

Վերջիվերջո, հաջողվում ե բջիջի կողմը  
գրավել գյուղացիների մեկ յերշորդ մասին: Ժո-  
ղովում են 52 ոռոքի և հրավիրում անդամների  
կազմակերպչական ժողով:

Գյուղացիները վարչության նախագահ են  
ընտրում յեռանդուն ու խելոք կոմյերիտական  
Նիկոլայ Սամաչեին, իսկ անդամներ՝ նորից մի  
կոմյերիտականի և յերեք անկուսակցական գյու-  
ղացի. վերստուգիչ հանձնաժողովի նախագահ ըն-  
տըրում են նույնպես կոմյերիտականներից:

Ժողոված դրամն ամբողջապես գործադր-  
վում ե կազմակերպչական ծախսեր կատարելու  
համար:

Մուկվայի կոռապերատիվների միությունը  
հազար հինգհարյուր ոռոքու ապրանք ե տալիս  
վարկով: Դրանով ել սկսվում ե պտավել կոռապե-  
րատիվի «կյանքի անիվը»: Կոռապերատիվը հա-  
ջող առետուր ե անում: Աճում են չոջանառու-  
թյան միջոցները, աճում ե փայտերերի քա-  
նակը և յերեք ամսից հետո կոռապերատիվը տա-

լիս ե 1169 ոռւրլի զուտ շահույթ, վորը և գործադրվում ե աշխատանքն ավելի ուժեղացնելու վրա։ Տեղական մասնավոր առևտրականը չդիմանալով մրցակցության, փակում ե իր խանութը։ Գյուղացիներն ազատվում են կուլակ-խանութպանից։

Կոռպերատիվը իր դրամով նպաստում ե գյուղի կուլտուրական շինարարությանը, իր հաշվին դուրս ե գրում թերթեր ու գրականություն։

Ստացված շահույթի վորոշ տոկոսով չքավոր բնակչությունը կոռպերատիվի մեջ ե քաշվում նրանց անդամավճարների մի մասը մուծելու ճանապարհով։

Այժմ գյուղացիները կոռպերատիվը դիմում են վորպես իրենց մոտ ու հարազատ մի գործ»։

Հողն ավելի կուլտուրա-  
նոմյերիսմիությունը կան ձեերով մշակելու հա-  
նպաստում ե գյու-  
ղաբնեսական գիտե-  
լիքների տարածման մար պահանջվում ե գյու-  
ղում լայն չափով տարա-

ծել գյուղատնտեսական գիտելիքները։ Կոմյերի-  
տականը գյուղում պետք ե հանդիսանա գյու-  
ղատնտեսական խմբակների կազմակերպիչը,  
կոմյերիսմիությունը պետք ե կարող կերպով  
ոգտագործի տեղական գյուղատնտեսներին։

Մեծ նշանակություն ունի գյուղական յե-

ըիտասարդության դպրոցը, Ներկայութև մենք  
ունենք 500 դպրոց, 300 հազար աշակերտու-  
թյամբ։ Գյուղական յերիտասարդության դպրո-  
ցը գյուղատնտեսական գիտելիքներից զատ,  
կոմյերիտականին տալիս են նույնպես ընդհանուր  
կրթական և քաղաքական գիտելիքներ և գյուղա-  
կան յերիտասարդից պատրաստում նոր գյուղի  
գիտակից կառուցող։

Միության հատուկ ուշադրությու-  
նը պետք է դարձված լինի բատրակ յե-  
րիտասարդության դաստիարակության  
վրա։ Պետք է բատրակներին մեծ չափով տե-  
ղավորել գյուղական յերիտասարդության դրա-  
րոցներում, ուր բատրակների տոկոսը մինչև  
հիմա մեծ չե։ Պետք է գտնել և հատուկ ձևեր  
բատրակ յերիտասարդության դաստիարակու-  
թյան համար։ Այսպես, որինակ, Մոսկվայի և  
Սարատովի նահանգներում փորձել են կազմա-  
կերպել ասաղձագործական, կոշկակարության և  
այլն արհեստանոցներ, վոր սկանդում են իրենց  
գյուղացիների և գյուղխորհուրդների հաշվին։

Կոմյերիտմիությունը  
գյուղում կռւակ-  
ցության գծի կիրա-  
ռողն ե

Առ 1-ն ապրիլի 1921թ.  
կոմյերիտմիության մեջ  
հաշվվում են 980 հազար  
բատրակներ ու գյուղա-  
ցիներ։ Այժմ այդ թիվը յերեք միլիոնից անցել

եւ Կոմյերիտմիության գյուղական բանակը — կուսակցության վիթխարի հենարանն ե իր գյուղացական քաղաքականության կիրառման խընդրում:

Իր անձնական որինակով, իր վողջ հասարակական աշխատանքով կոմյերիտականը պետք ե ոգնի կուսակցությանը ստեղծի չքավորի և միջակի դաշինք ընդդեմ կուլակի, ոգնի կուսակցության միջակին դրավելու գործում։ Յուրաքանչյուր առանձին կոմյերիտական կամ ԿՅԵՄ բջիջը գյուղում պետք ե կարողանան կապել իրենց անձնական շահերը սոցիալիստական շենարարության ընդհանուր շահերին։

## ՀԱՐՑԵՐ

- 1) Ներկայումս ինչպի՞սի պայքար ե տարվում յերիտասարդության համար։
- 2) Ի՞նչ ե պահանջվում կոմյերիտականից արդյունաբերության մեջ որինակելի լինելու համար։
- 3) Ի՞նչ խնդիրներ են դրված կոմյերիտմիության առաջ գործարանալին աշակերտության դպրոցների աշխատանքը բարելավելու համար։
- 4) Ի՞նչ միջոցներ են գործադրվում յերի-

տասարդության շրջանում գործազրկության դեմ  
պայքարելու համար:

5) Ի՞նչպես և պայքարում կոմիերիտմիու-  
թյունը նոր գյուղ կառուցելու համար:

## ԱՇԽԱՏԱՆՔ

1) Տեղեկացիր, նկատվում ե, արդյոք, ըս-  
ձեռնարկության մեջ գործազրկության դեպքեր,  
յեթե այս, տեղեկացիր և դրիբ պատճառների  
մասին:

2) Գրիբ կամ պատմիր, թե ինչպես ե աշ-  
խատում ձեր գործարանային դպրոցը, ինչպես  
ե դրված բրիգադային և անհատական աշակեր-  
տության գործը:

3) Տեղեկացիր, թե ինչ մասնակցություն  
են ցույց տալիս կոմիերիտականներն արտադ-  
րական խորհրդակցություններին:

4) Ի՞նչպես ե կիրառվում բրոնիան ձեռնար-  
կության մեջ:

5) Մի դիագրամ կազմիր, վորը ցույց տա-  
բանվոր լերիտասարդության քանակը ձեռնար-  
կության բանվորների ընդհանուր քանակի  
նկատմամբ:

12. ԼՈՊԱՏԻՆ, Հաղթանակ յերկրի վրա, պատ-  
 կերազարդ, 70 էջ, 1926 թ., Յերևան. » — ր. 10 կ.  
 13. ԿԱԼՄԱՆՍՈՆ ՅԵՎ. ԲԵԿԱՐՅՈՒԿՈՎ. Պահ-  
 պանիր առողջությունդ, 48 էջ, 1925 թ.,  
 Յերևան . . . . . » — ր. 15 կ.  
 14. ԿԱՍԻՄԵՆԿՈ. Կոմիերիտները գյուղում, 64.  
 էջ, 1925 թ., Յերևան . . . . . » — ր. 20 կ.  
 15. ԿԱԶԼՈՎ. Առորյա, պատմվածք, 48 էջ,  
 1925 թ., Յերևան . . . . . — ր. 20 կ.  
 16. ԿՈՒԶՄԻՆ. Քրիստոս Հարյավ ի մեռելոց,  
 27. էջ, 1926 թ., Լենինական . . . . » — ր. 15 կ.  
 17. ԿՎԻՐԻՆԳ. Կուսակցությունը գյուղում, 88  
 էջ, 1926 թ., Վաղարշապատ . . . . . » — ր. 30 կ.  
 18. ՄԵԴՎԵԴՎԱՆ-Տ. ՊԵՏՐՈՎՅԱՆ. Հեղափո-  
 խության հերոս, 72 էջ, 1926 թ.,  
 Յերևան . . . . . . . . » — ր. 25 կ.  
 19. ՄԻՐԱՇԵՎԱԿԻԻ. Յերիտ. Կոմ. Ինտերնացիո-  
 նալի պատմությունը, 64 էջ, 1925 թ.,  
 Յերևան . . . . . . . . » — ր. 10 կ.  
 20. ՄԱՏԼԻՆ. Կոմիերիտմիությունը բանտե-  
 րում 90 էջ, 1925 թ., Յերևան . . . » — ր. 25 կ.  
 21. ՄԻՐԱՇԵՎԱԿԻԻ. Քրեստոմատիա Կոմիերիտ.  
 պատմության, 62 էջ, 1926 թ., Յերևան » — ր. 25 կ.  
 22. ՇԱՀԳՅԱԼԻԴԻ, Ա. Գյուղացին ու բանվորը  
 ցարի ժամանակ, 29 էջ, 1925 թ., Յերևան — ր. 8 կ.  
 23. » Մեր գյուղը, 16 էջ, 1925 թ., Յերևան — ր. 8 կ.  
 24. ՉՈՒԲԱՐ, ՅԵ. Սկզբում, 48 էջ,  
 Լենինական . . . . .  
 25. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ. Պարզ կրույցնե  
 կայի մասին, 171 էջ, 1925 թ., Յ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045031

124]

A 1  
8213

26. ԱԱՐԳՈՅԱՆ Ա. Ողակին նավատորմը, 59 եջ  
1925 թ., Յերևան . . . . » — լ. 50 կ.
27. ԱԱՅՐԱԶԲԵԳՅԱՆ, Գ. Մի զբույց բանակի  
մասին, 20 եջ, 1925 թ., Լենինական. » — լ. 8 կ
28. ՍԵՄԿՈՎՍԿԻ. Մարքսիստական քրեստոմա-  
տիա յերիտասարդության համար,  
214 եջ, 1925 թ., Յերևան . . . . » 1 լ. 20 կ.
29. ԳՅՈՒՂՄԻԱՍՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ փոխադր.  
Միրաս, 26 եջ, 1925 թ., Վաղարշապատ » — լ. 10 կ.
30. ՍԱՆԴՈՄԻՐՍԿԻ. Յեվրոպան պատերազմից  
հետո, 120 եջ, 1925 թ., Վաղարշապատ » — լ. 35 կ.
31. ՎԼԱՍԵՆԻՈ. Աստված կա արդյոք, 68 եջ,  
1925 թ., Լենինական . . . . Գինը — լ. 30 կ.
32. ՏԱՐԱԽՉՅԱՆ. Ի՞նչ պետք է իմանա և անի  
տնտեսա-իրավական աշխատողը կոմյերիտ-  
միության մեջ, 61 եջ, 1925 թ., Վաղար-  
շապատ . . . . . » — լ. 20 կ.
33. ԳՅՈՒՂԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ. խորհուրդ-  
ների լի համագումարի մասին, 142 եջ,  
1925 թ., Լենինական. . . . » — լ. 50 կ.
34. Ռուսկոմկուսի (ր) X||| համագումարը .  
յերիտասարդության մասին, թարգմ. .  
Վ.Փոթեյան, 104 եջ, 1925 թ., Յերևան » — լ. 40 կ.